

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ






ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2015 ԹՎԱԿԱՆ

Բանկի Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների ու պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, թիզնեսի արդյունքերը և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Բանկի Վարչության անդամներ.

Աշոտ Օսիպյան	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն		<u>29.04.2016թ.</u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Դավիթ Հարությունյան	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ		<u>29.04.2016թ.</u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Բագրատ Ճզմաչյան	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ		<u>29.04.2016թ.</u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տիգրան Գալստյան	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ		<u>29.04.2016թ.</u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սուրեն Կարապետյան	Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների ղեկարարամենտի պետ		<u>29.04.2016թ.</u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ջարուհի Մելքոնյան	Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ		<u>29.04.2016թ.</u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կարեն Հակոբյան	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ		<u>29.04.2016թ.</u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

**ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԱՐԵԿԱՆ
ԶԵԿՈՒՅՑԸ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կառավարման մարմինների 2015 թվականի գործունեության տարեկան սույն զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
- կարևոր դեպքերի նկարագիրը,
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը:

Սույն հաշվետվությունը պատրաստվել է համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Փաստեր, ցուցանիշներ

+3.8 %	2015 թվականին ընդհանուր ակտիվների միջին օրական մեծությունը կազմել է 131,451.2 մլն. ՀՀ դրամ, որը 2014 թվականի համեմատ աճել է 3.8 %-ով:
+6.5 %	2015 թվականին հաճախորդներին տրված վարկերի միջին օրական մեծությունը կազմել է 62,833.3 մլն. ՀՀ դրամ, որը 2014 թվականի համեմատ աճել է 6.5 %-ով:
+3.5 %	2015 թվականին բանկի ընդհանուր պարտավորությունների միջին օրական մեծությունը կազմել է 109,477.0 մլն. ՀՀ դրամ, որը 2014 թվականի համեմատ աճել է 3.5 %-ով:
-66.9 %	2015 թվականի վերջին զուտ շահույթը կազմել է 941.7 մլն. ՀՀ դրամ, որը 2014 թվականի համեմատ նվազել է 66.9 %-ով:
+4.9 %	2015 թվականին բանկի ընդհանուր կապիտալի միջին օրական մեծությունը կազմել է 21,974.2 մլն. ՀՀ դրամ, որը 2014 թվականի համեմատ աճել է 4.9 %-ով:
+6.5 %	2015 թվականի վերջին ակտիվ հաշիվների շարժ ունեցող հաճախորդների թիվը կազմել է 117,232, որը 2014 թվականի վերջի համեմատ աճել է 6.5%-ով:
+19.4 %	2015 թվականին հաճախորդներից ընդունված կոմունալ վճարումների ծավալը կազմել է 15,767 մլն. ՀՀ դրամ, որը 2014 թվականի վերջի համեմատ աճել է 19.4%-ով:
+3.6 %	2015 թվականի վերջին թողարկված պլաստիկ քարտերի քանակը կազմել է 133,033 հատ, որը 2014 թվականի վերջի համեմատ աճել է 3.6%-ով:
+2	2015 թվականի ընթացքում բացվել է 2 մասնաճյուղ: Տարեվերջի դրությամբ բանկի տարածքային ցանցն ընդգրկել է 51 մասնաճյուղ:


Ֆինանսական ակնարկ


2015 թվականին արձանագրված միջազգային և ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների վատթարացման պայմաններում բանկը, օգտագործելով իր կողմից կիրառվող բանկային նորագույն տեխնոլոգիաները, ունենալով արհեստավարժ մասնագետներով հագեցած համախոհների թիմ, ապահովեց իր գործունեության կայունությունն ու հիմնական ցուցանիշների դրական դինամիկան, ինչը վկայում է Բանկի գործունեության կայունության, արդյունավետության և ստեղծված իրավիճակում՝ Բանկի մենեջմենթի կողմից ճիշտ ռազմավարության ընտրության փաստը:

Ակտիվներ

Բանկի ընդհանուր ակտիվները 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 132,027,472 հազ. ՀՀ դրամ՝ 2014թ. նույն ժամանակահատվածի (138,363,233 հազ. ՀՀ դրամ) համեմատ նվազելով 6,335,761 հազ. ՀՀ դրամով կամ 4.6%-ով: Մինչդեռ 2015 թվականին ակտիվների միջին օրական մեծությունը կազմել է 131,451,219 հազ. ՀՀ դրամ՝ գերազանցելով 2014 թվականի նույն ժամանակահատվածի՝ 126,688,959 հազ. ՀՀ դրամ ցուցանիշը 4,762,260 հազ. ՀՀ դրամով կամ 3.8%-ով: Հաշվետու տարում բանկի ակտիվների նվազումը հիմնականում պայմանավորված էր դրամական միջոցների և դրանց համարժեքների 5,586,103 հազ. ՀՀ դրամ կամ 12.7%, բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի և փոխառությունների 779,461 հազ. ՀՀ դրամ կամ 10.7% և վաճառքի համար մատչելի արժեթղթերի 279,580 հազ. ՀՀ դրամ կամ 1.8% նվազմամբ: Ակտիվների նվազմանը զուգահեռ տեղի է ունեցել ակտիվների կառուցվածքի դրական փոփոխություն, մասնավորապես ընդհանուր ակտիվներում նախորդ տարվա համեմատ հաճախորդներին տրված վարկերի տեսակարար կշիռն աճել է 2.4 տոկոսային կետով և կազմել՝ 50.1%, իսկ եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռն աճել է 2.34 տոկոսային կետով և կազմել՝ 66.44%

Ստորև բերված գծապատկերներում ներկայացված են նախորդ ինը տարիների ընթացքում արձանագրված ակտիվների փոփոխությունը և հաշվետու տարվա վերջի դրությամբ ակտիվների կառուցվածքը:





Վարկեր

2015 թ. դեկտեմբերի 31-ին հաճախորդներին տրված վարկերի ծավալը կազմել է 66,083,127 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 0.1%-ով կամ 96,282 հազ. ՀՀ դրամով: Մինչև նույն ժամանակ 2015 թվականին հաճախորդներին տրված վարկերի միջին օրական մեծությունը կազմել է 62,833,335 հազ. ՀՀ դրամ՝ գերազանցելով 2014 թվականի նույն ժամանակահատվածի՝ 59,017,052 հազ. ՀՀ դրամ ցուցանիշը 3,816,283 հազ. ՀՀ դրամով կամ 6.5%-ով: Վարկավորման նման ցուցանիշը պայմանավորված էր վարկերի նկատմամբ առողջ պահանջարկի անկմամբ և ՀՀ տնտեսության զարգացման ցիկլի ներկա փուլում կոնսերվատիվ վարկային քաղաքականություն վարելու անհրաժեշտությամբ:


Կոնսերվատիվ վարկային քաղաքականության վարման անհրաժեշտությունը պայմանավորված էր ՀՀ մակրոտնտեսական վիճակի վատթարացմամբ և տնտեսության զարգացման հետ կապված ձևավորված սպասումներով, մասնավորապես՝

☞ Համաձայն Ազգային վիճակագրական ծառայության 2015 թվականի գեկույցի՝ ՀՀ-ում առևտրի շրջանառությունը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 8.0 %-ով կամ ավելի քան 198 մլրդ ՀՀ դրամով:


☞ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած ոչ առևտրային դրամային փոխանցումների ծավալի նվազում՝ 2015 թվականին 2014 թվականի համեմատ նշված ցուցանիշը նվազել է ավելի քան 29.6%-ով: Մինչև նույն ժամանակ ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած ոչ առևտրային դրամային փոխանցումների զուտ ներհոսքը 2015 թվականին նախորդ տարվա համեմատ նվազել է ավելի քան 35.5%-ով:

Նախորդ ֆինանսական տարվա համեմատ 2015թ.-ին ֆիզիկական անձանց տրված վարկերի ծավալն աճել է 6.7%-ով կամ 1,224,445 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 19,484,684 հազ. ՀՀ դրամ, անհատ ձեռնարկատերերին տրված վարկերի ծավալը նվազել է 21.5%-ով կամ 2,567,984 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 9,391,902 հազ. ՀՀ դրամ, իսկ իրավաբանական անձանց տրված վարկերի ծավալն աճել է 3.9%-ով կամ 1,446,017 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 38,833,034 հազ. ՀՀ դրամ:

Վերջին ինը տարիների ընթացքում վարկային պորտֆելի փոփոխման դինամիկան պատկերված է ստորև բերված գծապատկերում.




2015թ. վերջի դրությամբ բանկի վարկային պորտֆելի կառուցվածքը, ըստ տնտեսության ճյուղերի, ունի հետևյալ տեսքը.



Ինչպես երևում է գծապատկերից, բանկի վարկային պորտֆելի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի բարձր դիվերսիֆիկացված և ցածր ռիսկային է:

Հաշվետու տարում բանկը կարևորելով մանրածախ վարկավորման ոլորտը, իրականացրել է մի շարք միջոցառումներ տրամադրվող վարկերի ծավալներն ավելացնելու, վարկավորման պայմանները բարելավելու և վարկավորման գործընթացները կանոնակարգելու ուղղությամբ:

2015թ. վերջի դրությամբ մանրածախ վարկային պորտֆելի կառուցվածքը ներկայացվում է ստորև.



Միջազգային վարկային ծրագրեր

Բանկի ղեկավարությունը, կարևորելով միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցությունը, մշտապես առաջնային դեր է հատկացնում դրանց խորացմանը և ընդլայնմանը:

2015 թվականի ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը շարունակեց ակտիվ համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ: Մասնավորապես, Բանկը կնքեց 10 միլիոն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր responsAbility Investments AG կազմակերպության հետ և 10 միլիոն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր DEG DEUTSCHE INVESTITIONS-UND ENTWICKLUNGSGESELLSCHAFT MBH կազմակերպության հետ՝ Հայաստանում փոքր և միջին բիզնեսի ֆինանսավորման նպատակով:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի հետ համագործակցող և գործընկեր միջազգային կառույցների շարքում են նաև Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ/EBRD), Վերականգնման վարկային հաստատությունը (KfW), Համաշխարհային բանկը (WB), Սևծովյան զարգացման բանկը (BSTDB), Ասիական զարգացման բանկը (ADB), Հարավ-արևելյան Եվրոպայի Եվրոպական հիմնադրամը (EFSE), FMO նիդերլանդական ֆինանսական կազմակերպությունը և The OPEC Fund for International Development (OFID) ֆինանսական կազմակերպությունը:

2015 թվականի ընթացքում թողարկած փաստաթղթային գործիքների ծավալը գերազանցեց նախորդ տարվա ցուցանիշը 48%-ով: Բանկը շարունակեց նաև կարճաժամկետ վերականգնվող վարկերի տրամադրումը՝ ուղղված ներմուծման և արտահանման գործարքների ֆինանսավորմանը՝ արձանագրելով կնքված


վերականգնվող վարկային պայմանագրերի քանակի աճ՝ 30%-ով նախորդ տարվա համեմատ:

2015 թվականի ընթացքում բանկի կողմից առևտրի ֆինանսավորման ոլորտում իրականացված ակտիվ գործունեության արդյունքում Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) կողմից ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ճանաչվեց Միջազգային առևտրի խթանման ծրագրի (TFP) շրջանակներում ամենաակտիվ թողարկող բանկը Հայաստանում:

Արժեթղթեր

2015 թվականի ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն, իր ներդրումային քաղաքականության շրջանակում շարունակեց ակտիվ գործունեություն ծավալել նաև արժեթղթերի շուկայում՝ ապահովելով համապատասխան ցուցանիշների շարունակական աճ:

Հաշվետու տարվա վերջի դրությամբ արժեթղթերում բանկի ներդրումային պորտֆելը կազմեց 15,144,701 հազ. ՀՀ դրամ, որտեղ կարճաժամկետ (0-ից 3 տարի ժամկետայնությամբ) պարտատոմսերը կազմել են պորտֆելի շուրջ 68.9%, միջնաժամկետ (3-5 տարի ժամկետայնությամբ) պարտատոմսերը՝ 8.7%-ը իսկ երկարաժամկետ (5 և ավել տարի ժամկետայնությամբ) պարտատոմսերը՝ 22.4%:



2015 թվականին բանկի կողմից ՀՀ պետական արժեթղթերի առաջնային շուկայում կատարված գործառնությունների ծավալը կազմեց 38,776,799 հազ. ՀՀ դրամ, իսկ երկրորդային շուկայում՝ 81,263,774 հազ. ՀՀ դրամ: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից ստացված եկամուտները, որոնց մեջ ավելի քան 99%-ը կազմում են պետական պարտատոմսերը, կազմել են 1,414,464 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 17,332 հազ. ՀՀ դրամով կամ 1.2 %-ով:

Արդյունքում «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի կողմից կազմակերպված «Լավագույն անդամ» տարեկան մրցանակաբաշխության ժամանակ բանկը 2015 թվականի գործունեության արդյունքներով չորրորդ անգամ արժանացավ «Բորսայի լավագույն անդամ»՝ պետական պարտատոմսերի շուկայում մրցանակին:

Բանկի կողմից թողարկված կորպորատիվ պարտատոմսեր

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն կարևորելով տնտեսության ֆինանսական հատվածում արժեթղթերի և կապիտալի զարգացած շուկա ունենալու դերը և նշանակությունը՝ շարունակեց իր ներդրումն ունենալ արժեթղթերի շուկայի ակտիվացման և զարգացման գործում:

2015 թվականի ընթացքում բանկը թողարկեց և ամբողջությամբ տեղաբաշխեց.

- 2 մլն. ԱՄՆ դոլարի՝ 80 հազ. հատ, 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, տարեկան 7.25% եկամտաբերությամբ, 3 տարի մարման ժամկետով, չփոխարկվող, կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր:

- 2 մլն. ԱՄՆ դոլարի՝ 80 հազ. հատ, 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, տարեկան 7% եկամտաբերությամբ, 2 տարի մարման ժամկետով, չփոխարկվող, կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր:

Ընդ որում, նշված պարտատոմսերի թողարկմամբ ներգրավված միջոցների դիմաց պահուստավորումը կատարվել է նվազեցված 5% դրույքաչափով՝ ներկայում գործող արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց ՀՀ դրամով կատարվող պահուստավորման 20% դրույքաչափի փոխարեն:

2015 թվականի վերջի դրությամբ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ կորպորատիվ պարտատոմսերի երկրորդային՝ Bbond հարթակում գնանշվել են ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ թողարկման, ընդհանուր 6 մլն. ԱՄՆ դոլար և 400 մլն. ՀՀ դրամ անվանական արժեքով կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր:

2015 թվականի ընթացքում պարտատոմսերի երկրորդային շուկայում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից թողարկված կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերով իրականացվել է 226 գործարք, ընդհանուր 1,209 հազ. ԱՄՆ դոլար և 218 մլն. ՀՀ դրամ շրջանառության ծավալով:

Հաշվետու տարվա վերջում թողարկված պարտատոմսերի դիմաց բանկի պարտավորությունը կազմեց 3,323,481 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 79.85%-ով:

Արտարժույթի առքուվաճառքի գործառնություններ

Տարվա ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ակտիվ գործունեություն ծավալեց ինչպես «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ֆոնդային բորսայի արտարժույթային գործառնությունների հարթակում, այնպես էլ բորսայից դուրս: Արտարժույթային գործառնությունների ծավալներն՝ ըստ արտարժույթների, կազմեցին.

- ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը՝ 725,005 հազ. ԱՄՆ դոլար, նախորդ տարվա համեմատ նվազելով 27.97%-ով,

- ՌԴ ռուբլով գործարքների ծավալը՝ 21,142,471 հազ. ՌԴ ռուբլի, նախորդ տարվա համեմատ աճելով 69.07%-ով,

- Եվրոյով գործարքների ծավալը՝ 162,910 հազ. եվրո, նախորդ տարվա համեմատ աճելով 57.44%-ով:

Բանկում ներդրված՝ հաճախորդներին արտարժույթի առքուվաճառքի հնարավորություն տվող ԱՐԱՐԱՏԴԻԼԻՆԳ արտարժույթային առևտրային հարթակի միջոցով ընթացիկ տարում իրականացվեցին ավելի քան 9,379 հազ. ԱՄՆ դոլարի

ծավալով գործարքներ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 42.74%-ով:

Բանկի որդեգրած՝ դեպի հաճախորդն ուղղված քաղաքականության ներքո բանկը շարունակեց մրցակցային գնանշումներ իրականացնել արտարժույթային շուկայում: Նման մոտեցման արդյունքում հաճախորդներ հանդիսացան և առաջարկված ծառայություններից օգտվեցին նաև այլ առևտրային բանկեր: 2015 թվականին արտարժույթի առքուվաճառքից ստացված զուտ եկամուտը կազմեց 867,251 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ նվազեց 5.7 %-ով:

Միջբանկային վարկեր

Ելնելով ստեղծված աշխարհաքաղաքական զարգացումներից, ՀՀ տնտեսությունում սպասվող համակարգային բարձր ռիսկերից՝ Բանկը որդեգրեց միջոցների տեղաբաշխման զգուշավոր քաղաքականություն, ինչը հնարավորություն տվեց բանկին միջոցները տեղաբաշխել առավել ցածր ռիսկային և բարձր իրացվելի գործիքներում, այդ թվում միջբանկային վարկերում և օվերնայթներում:

2015 թվականի ընթացքում բանկի կողմից տրամադրված «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ վարկային ռեսուրսների հարթակում կնքված գործարքների ծավալը կազմեց 64,820 հազ. ՀՀ դրամ:

Պարտավորություններ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի պարտավորությունները կազմել են 109,555,891 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 6.1%-ով կամ 7,137,947 հազ. ՀՀ դրամով: Միևնույն ժամանակ 2015 թվականին բանկի պարտավորությունների միջին օրական մեծությունը կազմել է 109,476,978 հազ. ՀՀ դրամ՝ գերազանցելով 2014 թվականի նույն ժամանակահատվածի՝ 105,741,766 հազ. ՀՀ դրամ ցուցանիշը 3,735,212 հազ. ՀՀ դրամով կամ 3.5%-ով:


Հաշվետու տարում բանկի պարտավորությունների նվազումը հիմնականում պայմանավորված էր միջազգային ֆինանսական կազմակերպություններից և ոչ ռեզիդենտ բանկերից ներգրավված միջոցների՝ 9.5% կամ 3,828,707 հազ. ՀՀ դրամ և Հաճախորդների նկատմամբ պարտավորությունների՝ 9.8% կամ 6,473,197 հազ. ՀՀ դրամ նվազմամբ: Տարեվերջին բանկի կողմից միջազգային ֆինանսական կազմակերպություններից և ոչ ռեզիդենտ բանկերից ներգրավված փոխառությունները կազմել են 36,539,681 հազ. ՀՀ դրամ կամ պարտավորությունների 33.3%-ը, ինչը փաստում է, որ բանկի համար առանցքային դեր և նշանակություն ունի միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության խորացումը և ընդլայնումը:

Պարտավորությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեն նաև Հաճախորդների ընթացիկ հաշիվները և ավանդները՝ 54.16% կամ 59,337,156 հազ. ՀՀ դրամ, որոնք իրենց մեջ ներառում են իրավաբանական և ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդները և ՀՀ կառավարության ընթացիկ հաշիվները և ավանդները:

Ընդ որում հատկանշական է, որ հաճախորդների ընթացիկ հաշիվներում և ավանդներում նախորդ ֆինանսական տարվա համեմատ զգալիորեն ավելացել են ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ցպահանջ ավանդները՝

համապատասխանաբար 10.5 և 33.1%-ով կամ 1,130,659 հազ. և 5,952,271 հազ. ՀՀ դրամով:


Բանկի ընդհանուր պարտավորությունների դինամիկան վերջին ինը տարիների ընթացքում պատկերված է ստորև:



Սեփական կապիտալ


Հաշվետու ֆինանսական տարվա ընթացքում բանկի սեփական կապիտալը կազմել է 22,471,581 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 802,186 հազ. ՀՀ դրամով կամ 3.7%-ով: Սեփական կապիտալի աճը հիմնականում պայմանավորված էր հաշվետու ժամանակահատվածում ձևավորված շահույթի աճով և վերագնահատման պահուստների նվազմամբ:

Ստորև բերված գծապատկերում արտացոլված է սեփական կապիտալի փոփոխությունն ըստ տարիների:



2015 թվականին կապիտալի աճի արդյունքում մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը կազմել է 17,590 ՀՀ դրամ՝ 2013թ.-ի նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով 3.7%-ով՝ 5000 ՀՀ դրամ անվանական արժեքի պարագայում: Բաժնետոմսի հաշվեկշռային արժեքի դինամիկան տարիների ընթացքում պատկերված է ստորև բերված գծապատկերում:

Բաժնետոմսի հաշվեկշռային արժեքի դինամիկան, հազ. ՀՀ դրամ



Եկամուտներ և ծախսեր

Տոկոսային և նմանատիպ եկամուտները հաշվետու տարվա գործունեության արդյունքում կազմել են 10,239,473 հազ. ՀՀ դրամ՝ նվազելով 7.3%-ով կամ 803,773 հազ. ՀՀ դրամով:

Տոկոսային և նմանատիպ եկամուտներում գերակշիռ մասը բաժին է ընկել հաճախորդներին տրամադրված վարկերից ստացված եկամուտներին, որը կազմել է 8,014,944 հազ. ՀՀ դրամ կամ 78.3%: Հաճախորդներին տրամադրված վարկերից ստացված եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են 178,174 հազ. ՀՀ դրամով կամ 2.3%-ով: Նման աճի տեմպը պայմանավորված է ՀՀ բանկային համակարգում առկա սուր մրցակցության պայմաններում տոկոսային սպրեդի շարունակական նվազման միտումով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից ստացված եկամուտները կազմել են 1,414,464 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 17,332 հազ. ՀՀ դրամով կամ 1.2 %-ով:

Բանկի կողմից թողարկվող պլաստիկ քարտերի քարտապանների թվի աճի հետևանքով 6,414 հազ. ՀՀ դրամով կամ 2.1%-ով ավելացել է պլաստիկ քարտերի սպասարկումից ստացված եկամուտը՝ տարեվերջին կազմելով 307,977 հազ. ՀՀ դրամ, դրա հետ մեկտեղ ավելացել են նաև պլաստիկ քարտերով գործառնությունների հետ կապված ծախսերը՝ 105,375 հազ. ՀՀ դրամով կամ 36.6%-ով՝ տարեվերջին կազմելով 393,522 հազ. ՀՀ դրամ:

2015 թվականին զուտ կոմիսիոն եկամուտները կազմել են 508,945 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 14.7%-ով:

Զուտ կոմիսիոն եկամուտների նվազումը հիմնականում պայմանավորված է բանկի կողմից տրամադրված վարկերի սպասարկումից ստացվող կոմիսիոն վճարների, նախորդ տարվա համեմատ արագ դրամական փոխանցումների ծավալների նվազմամբ և պլաստիկ քարտերով գործառնությունների հետ կապված ծախսերի աճով:

Բանկի կողմից տրամադրված վարկերի սպասարկումից ստացվող կոմիսիոն վճարների նվազումը պայմանավորված է բանկի ճկուն վարկավորման քաղաքականությամբ, համաձայն որի վերանայվել և իջեցվել են տրամադրվող վարկերի համար գանձվող միջնորդավճարները՝ նպատակ ունենալով ձևավորել դիվերսիֆիկացված, ցածր ռիսկային և բարձր իրացվելի վարկային պորտֆել: Բանկի կողմից սպասարկվող արագ դրամական փոխանցումների ծավալների նվազումը պայմանավորված է դեպի ՀՀ արագ դրամական փոխանցումների ծավալների կտրուկ անկմամբ:

Հաշվետու տարում արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտը կազմել է 867,251 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 5.7%-ով:

Հաշվետու տարում տոկոսային և նմանատիպ ծախսերը կազմել են 5,675,713 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 17.5%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարների, Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի և այլ փոխառությունների գծով վճարված գումարների աճով:

Հաշվետու տարվա ընթացքում մասնաճյուղային ցանցի ընդլայնման և բանկի աշխատողների թվաքանակի ավելացման, ինչպես նաև բանկի աշխատողների աշխատավարձերի բարձրացման հետևանքով անձնակազմի գծով կատարված ծախսերը կազմել են 2,234,521 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 2.0%-ով կամ 43,664 հազ. ՀՀ դրամով:

2015 թվականին այլ ընդհանուր կառավարչական ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 3.2 տոկոսով կամ 58,963 հազ. ՀՀ դրամով և կազմել 1,897,056 հազ. ՀՀ դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է բանկի մասնաճյուղային ցանցի ընդլայնմամբ, աշխատողների թվի շարունակական աճով և տեխնիկական վերազինմամբ:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է բանկի եկամուտների և ծախսերի դինամիկան նախորդ երկու տարիների կտրվածքով

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	10,239,473	11,043,246
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(5,675,713)	(4,828,602)
Զուտ տոկոսային եկամուտներ	4,563,760	6,214,644
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	1,002,273	987,384
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(493,328)	(390,914)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտներ	508,945	596,470

Ձուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից	(40,262)	16,011
Ձուտ եկամուտ փոխարժեքային տարբերություններից	781,483	918,731
Ձուտ օգուտ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից	22,797	187,068
Այլ գործառնական եկամուտ/(ծախս)	494,793	377,041
Արժեզրկումից կորուստներ	(960,703)	(740,436)
Անձնակազմի գծով ծախսեր	(2,234,521)	(2,190,857)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(1,897,056)	(1,838,093)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	1,239,236	3,540,579
Շահութահարկի գծով ծախս	(297,555)	(697,147)
Տարվա շահույթ	941,681	2,843,432

Հիմնական ֆինանսական ցուցանիշներ

Շահութաբերության գործակիցներ և շահաբաժիններ

Հաշվետու տարվա զուտ շահույթը կազմել է 941,681 հազ. ՀՀ դրամ:

Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները կազմել են.

Կապիտալի շահութաբերություն (ROE)՝ 4.3%,

Ակտիվների շահութաբերություն (ROA)՝ 0.7%:

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել է 737 ՀՀ դրամ:

Բանկի մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը տարեվերջի դրությամբ կազմել է 17,590 ՀՀ դրամ, անվանական արժեքը՝ 5,000 ՀՀ դրամ:

Բաժնետոմսի հաշվեկշռային արժեքի և մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշի հարաբերակցությունը (P/E ratio) կազմել է 23.87:

2015 թվականին 2014 թվականի 2,843,432 հազ. ՀՀ դրամ շահույթից շահաբաժիններ չեն վճարվել: Ձևավորված շահույթից 600,000 հազ. ՀՀ դրամ ուղղվել է պահուստային հիմնադրամի համալրմանը, իսկ մնացած շահույթը՝ որպես չբաշխված շահույթ մնացել է բանկում՝ նպաստելով կապիտալի աճին: Բանկի կողմից շահաբաժիններ չվճարելու որոշման կայացումը պայմանավորված է ՀՀ ԿԲ-ի կողմից 2017 թվականի հունվարի մեկից ՀՀ առևտրային բանկերի համար սահմանված նվազագույնը 30 մլրդ. ՀՀ դրամ նորմատիվային կապիտալի ապահովման պահանջով:

Ռիսկերի կառավարումը

2015թ.-ին բանկը շարունակել է զարգացնել ռիսկերի կառավարման համակարգը, ընդ որում՝ շեշտադրում է կատարվել գործառնական ռիսկերի կառավարման համակարգի, վարկերի ընթացիկ հսկողության մոնիթորինգի մեթոդների բարելավման ու կատարելագործման ուղղությամբ:

2015թ.-ին վերանայվել և հաստատվել է Ռիսկերի կառավարման քաղաքականությունը, որով սահմանվում են բանկի կողմից ընդունելի ռիսկերը, դրանց կառավարման սկզբունքները, մասնակից ստորաբաժանումների և կոլեգիալ մարմինների պարտականություններն ու իրավասությունները:

Բանկը ռիսկերի կառավարում իրականացնում է՝ ելնելով հետևյալ հիմնական սկզբունքներից.

1. Ռիսկերի գնահատումն իրականացվում է անկախ ստորաբաժանման կողմից, ինչը բացառում է շահերի բախումը:

2. Ռիսկերը նույնականացվում և կանխարգելվում են մինչ դրանց ի հայտ գալը կամ ի հայտ գալու վաղ շրջանում:

3. Ռիսկերի կառավարումն իրականացվում է հաշվի առնելով բանկի երկարաժամկետ ռազմավարությունը, ինչպես նաև երկրի ֆինանսատնտեսական վիճակը:

4. Բանկի կոլեգիալ մարմինների և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասություններն ու պարտականությունները հստակ տարանջատված են:

5. Ռիսկերի կառավարումն իրականացվում է միասնական՝ դիտարկելով բոլոր ռիսկերը միմյանց հետ փոխկապված:

6. Ռիսկերի զսպման նպատակով գործում է սահմանաչափերի համակարգը:

Ռիսկերի կառավարման գործընթացը կոորդինացնում են Խորհուրդը և Գործադիր մարմինը, իսկ ընթացիկ կառավարումն իրականացվում է Ռիսկերի կառավարման վարչության, Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովի, Գործառնական ռիսկերի կառավարման հանձնաժողովի, վարկային կոմիտեների և բանկի այլ ստորաբաժանումների կողմից:

Ռիսկերի կառավարման նկատմամբ ընդհանուր հսկողությունն իրականացվում է բանկի Խորհրդի կողմից:

Բանկի գործադիր մարմինն իրականացնում է ռիսկերի կառավարման գործընթացի նկատմամբ հսկողություն, ինչպես նաև հաստատում է վերջինիս վերաբերող իրավական ակտեր:

Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովը զբաղվում է իրացվելիության և շուկայական ռիսկերի կառավարման հարցերով:

Ռիսկերի կառավարման վարչությունը պատասխանատու է ռիսկերի գնահատման և վերլուծության համար, ինչպես նաև ռիսկերի կառավարման բնագավառը կարգավորող ներքին իրավական ակտերի մշակման համար:

Հաշվետու տարում բանկն ուսումնասիրելով միջազգային փորձը, վերանայեց ռիսկերի կառավարման բնագավառը կանոնակարգող ներքին իրավական ակտերը՝ ապահովելով ճկունության և ռիսկերի կառավարման բարձր մակարդակ:

2015թ.-ին վերանայվել և բանկի վարչության կողմից հաստատվել է Սթրես թեստերի իրականացման աշխատակարգը, որի նպատակն է Բանկի գործունեությանն առնչվող ռիսկերի գործոնների փոփոխությունների ազդեցության չափի և որոշումների կայացման ժամանակ սթրեսային իրավիճակների գնահատումը:

Բանկի կողմից ընդունվող և կառավարվող հիմնական ռիսկերը՝ իրացվելիության, վարկային, արտարժույթային, տոկոսադրույքի և գործառնական ռիսկերն են:

Վարկային ռիսկ

Հաշվի առնելով 2015թ. ՀՀ տնտեսության որոշակի անկումը, վերջինիս բացասական կանխատեսումը, աշխարհաքաղաքական փոփոխությունները և դրանց ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա՝ բանկը մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահում վարկային ռիսկի /բանկի նկատմամբ փոխառուի կողմից իր պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակի չկատարելու ռիսկն է/

կառավարման հարցերը և ունի պահպանողական մոտեցում վարկառուների վարկունակության գնահատման հարցում:

Վարկային ռիսկի գնահատումը և կառավարումը բանկում իրականացվում է երկու մակարդակով՝ վարկային պորտֆելի և վարկառուի:

Վարկային ռիսկերի կառավարման նպատակով բանկում բացահայտվում են կենտրոնացումներ ինչպես տնտեսության ճյուղերի, այնպես էլ ըստ գրավի տեսակների, վարկատեսակների, աշխարհագրական տեղաբաշխվածության, ըստ խոշոր փոխառուների և այլ կենտրոնացումների:

Բանկում վարկային ռիսկերը բացահայտվում են ինչպես վարկի տրամադրման նախնական փուլում, այնպես էլ վարկի սպասարկման ընթացքում իրականացվող պարբերաբար մոնիթորինգների արդյունքում, ինչը հնարավորություն է տալիս ռիսկերի գնահատումը և կառավարումն իրականացնել առավել արդյունավետ:

2015թ.-ին վերանայվեց և խորհրդի կողմից հաստատվեց Վարկերի ընթացիկ հսկողության մոնիթորինգի կարգը, ըստ որի ներդրվեց ռիսկերի վրա հիմնված մոնիթորինգի իրականացումը: Այն հնարավորություն է տալիս վարկի սպասարկման ընթացքում վաղ շրջանում հայտնաբերելու վարկառուի գործունեությանը և վարկի վերադարձելիությանը սպառնացող ռիսկերը:

Բանկը տնտեսության փոփոխություններին համահունչ փոփոխում է վարկային ռիսկի կառավարման իր մոտեցումները, իրականացնում է սթրես թեստեր, հաշվի առնելով մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունն ինչպես առանձին վարկառուների, այնպես էլ վարկային փաթեթի ռիսկի մակարդակի վրա:

Բանկի վարած քաղաքականության արդյունքում, պահպանելով վարկային պորտֆելի մակարդակը, խնդրահարույց վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկերում նվազեցրել է 2.6%-ից մինչև 2.2%, ինչպես նաև բանկը պահպանել է կապիտալի համարժեքության բարձր մակարդակը, որը տարեվերջին կազմել է 19.86%:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը /բանկի կողմից իր պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ չկատարելու ռիսկ/ նույնականացվում և գնահատվում է միաժամանակ երկու իրարից անկախ ստորաբաժանումներում, ինչի շնորհիվ բանկի ղեկավարությունը միշտ ստանում է իրացվելիության ռիսկի մակարդակի մասին օբյեկտիվ գնահատական:

Բանկում ներդրված է իրացվելիության կառավարման կարգը, ինչպես նաև իրացվելիության ճգնաժամային կառավարման կարգը:

Բանկում գործում են ներքին սահմանաչափեր, որոնց պահպանման նկատմամբ իրականացվում է ամենօրյա հսկողություն: Սահմանաչափերն ուղղված են իրացվելի միջոցների բավարար մակարդակի, բարձր իրացվելի միջոցների դիվերսիֆիկացիայի, ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության համապատասխանության պահպանմանը:

Բանկում պարբերաբար գնահատվում է սթրեսային իրավիճակների ազդեցությունն իրացվելիության մակարդակի վրա, ինչը թույլ է տալիս ժամանակին որոշումներ կայացնել՝ ուղղված ցանկացած իրավիճակում համարժեք իրացվելի միջոցների պահպանմանը:

Տոկոսադրույքի ռիսկ

Շուկայական տոկոսադրույքի փոփոխության հնարավոր ազդեցությունը Բանկի տոկոսադրույքի ռիսկ կրող ակտիվային և պասիվային հոդվածների վրա և դրանից բխող հնարավոր կորուստների վտանգը նվազեցնելու նպատակով բանկում նույնականացվում են բազիսային, ժամկետային անհամապատասխանության, եկամտաբերության կորի և օպցիոնալ ռիսկերը:

Բանկն իրականացնում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքի, ինչպես նաև տոկոսադրույքի փոփոխությունների նկատմամբ զգայունության վերլուծություններ: Տոկոսադրույքի ռիսկի կառավարման նպատակով բանկում ներդրված են սահմանաչափեր, որոնց նկատմամբ հաշվետվողականություն և հսկողություն է իրականացվում Ռիսկերի Կառավարման վարչության կողմից: Իրականացվում են նաև տարբեր սցենարներով սթրես թեստեր տոկոսադրույքի հնարավոր փոփոխությունների ազդեցությունը բանկի կապիտալի նկատմամբ որոշելու համար:

Արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկերի կառավարումը բանկում իրականացվում է սահմանաչափերի սահմանմամբ և դրանց նկատմամբ օպերատիվ հսկողություն իրականացնելու միջոցով:

2015թ. ընթացքում արտարժույթային շուկան բնութագրվում էր միջին տատանողականությամբ: Զսպված արժույթային քաղաքականությամբ և ռիսկերի հեջավորման շնորհիվ բանկը կարողացավ զերծ մնալ փոխարժեքի տատանումների բացասական ազդեցությունից:

Բանկում պարբերաբար կիրառվում են սթրես թեստեր՝ հաշվի առնելով փոխարժեքի տատանման տարբեր սցենարներ, որոնք ցույց են տալիս, որ բանկն ունակ է դիմակայելու սթրեսային իրավիճակներին: Դրա մասին է վկայում ԱՄՆ դոլարի փոխարժեքի տատանումների հետևանքով բանկի կողմից վնասներ չկրելու, ինչպես նաև հաճախորդների հանդեպ վստահությունը չկորցնելու փաստը:

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկերն ի հայտ են գալիս արտաքին միջավայրի փոփոխության դեպքում, ներքին գործընթացների կազմակերպման ժամանակ, մարդկային գործոնով պայմանավորված, ինչպես նաև համակարգերում փոփոխություններ կատարելիս: Գործառնական ռիսկերի կառավարումը շարունակական գործընթաց է, որն իրականացվում է բանկի գործարար գործընթացների անընդհատ ուսումնասիրությամբ և համապատասխան ռիսկերի կանխարգելման կամ նվազեցման միջոցով: Ռիսկերի կանխարգելումն իրականացվում է.

1. Ներքին հսկողության համակարգի ներդրմամբ,
2. Իրավասությունների և պարտականությունների հստակ բաշխմամբ,
3. Հաշվետվողականության համակարգով,
4. Շահերի բախման բացառմամբ և այլն:

2015թ.-ին բանկում վերանայվեց Գործառնական ռիսկերի կառավարման կարգը, ըստ որի ներդրվեց Ռիսկերի հիմնական ցուցանիշների վերաբերյալ հավելվածը, ինչը հնարավորություն է տալիս եռամսյակային կտրվածքով բանկի ստորաբաժանումներից ազդակներ ստանալ գործառնական Ռիսկերի վերաբերյալ:

Բանկում կիրառվում է գործառնական ռիսկերի գնահատման համակարգ, ինչը հիմնված է գործառնական ռիսկերի դեպքերի ի հայտ գալու հավանականության և դրանից բխող առավելագույն կորստի հաշվարկման վրա: Վերոնշյալ հաշվարկն ապահովելու համար բանկում վարվում է գործառնական ռիսկի դեպքերի և դրանց հավանական կորուստների շտեմարան:

Բանկում գործում է գործառնական ռիսկերի կառավարման հանձնաժողով, որը քննարկում և լուծումներ է առաջարկում գործառնական ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ:

Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգ

Բանկում գործում է Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգը: Այդ ռիսկերը բացահայտվում են ինչպես վարկերի տրամադրման նախնական փուլում, այնպես էլ վարկի սպասարկման ընթացքում իրականացվող պարբերական բնույթ կրող մոնիթորինգների արդյունքում, ինչը հնարավորություն է տալիս ռիսկերի գնահատումը և կառավարումն իրականացնել առավել արդյունավետ: Վարկառուների վարկունակության գնահատման ընթացքում իրականացվում են սոցիալական և բնապահպանական ռիսկերի գնահատում, որը պատկերացում է տալիս առկա և հնարավոր սոցիալական և բնապահպանական ռիսկերի մասին: Բանկի սոցիալական և բնապահպանական ռիսկերի կառավարման համակարգը հիմնված է շրջակա միջավայրի, առողջապահական, սոցիալական և աշխատանքային հարաբերությունների ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրական ակտերով սահմանված նորմերի, միջազգային չափանիշների և փորձի վրա, ինչպես նաև համաձայնեցված է բանկի հետ համագործակցող ֆինանսական հաստատությունների հետ:

Ներքին հսկողական համակարգ

Ներքին հսկողական համակարգը բանկի զարգացման ռազմավարական նպատակների իրագործման և կառավարման հիմնական տարերից է:

Ներքին հսկողական համակարգն ուղղված է բարելավելու և զարգացնելու բանկի գործունեության արդյունավետությունը, աջակցում է բանկին հասնելու իր նպատակներին՝ ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով:

Այդ իսկ նպատակով բանկում ներդրվել է միջազգային լավագույն փորձին համապատասխան ներքին հսկողության համակարգ, ինչպես նաև ռիսկերի գնահատման հիման վրա բանկի ներքին աուդիտի աշխատանքների պլանավորման, ստուգումների իրականացման և հետստուգումային հսկողության (Follow up) գործառույթ:

Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներին ու վարվելակերպի կանոններին համապատասխան բանկում

ներդրված Ներքին աուդիտի գործառույթն ապահովում է անկախ և անկողմնակալ հավաստման (assurance) գործունեության իրականացում՝ ուղղված բանկի կառավարման, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ու գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Նշվածի ներքո հաշվետու տարվա ընթացքում Ներքին աուդիտի կողմից իրականացվել են ռիսկերի վրա հիմնված տարբեր գործարար գործընթացների համալիր և նպատակային շուրջ 57 ստուգումներ, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի և վերջինիս գծով տեղեկատվական անվտանգության ապահովման ստուգումներ և ուսումնասիրություններ:

Ստուգումների և ուսումնասիրությունների նպատակն է եղել գնահատելու բանկում ներքին հսկողության, ռիսկերի կառավարման, ներքին տեղեկատվական և հաշվետվողական համակարգերի արդյունավետությունը:

Ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքները նպաստել են բացահայտված խնդիրների վերացման նպատակով ուղղիչ և կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը՝ ուղղված բանկի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ու գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

2015 թվականի ընթացքում բանկում ներդրվել է Համապատասխանության ապահովման գործառույթը, որի հիմնական նպատակն է օժանդակել բանկին գործել օրենսդրության պահանջներին համապատասխան, ինչպես նաև խրախուսել և պահպանել համապատասխանության ապահովման կորպորատիվ մշակույթը:

Վճարահաշվարկային գործառնություններ

Բանկը հաճախորդների դրամական փոխանցումների սպասարկման որակը բարձրացնելու և գործընթացը դյուրացնելու նպատակով շարունակել և զարգացրել է համագործակցությունը Unistream, MoneyGram, Ria Money, Anelik, Xpress Money, INTEL EXPRESS, Sigue և CONVERSE TRANSFER արագ դրամական փոխանցումների համակարգերի հետ՝ նորանոր անակնկալներ մատուցելով հաճախորդներին: Մասնավորապես, 2015 թվականի մարտի 8-ից ապրիլի 7-ը Ria Money համակարգի հետ համատեղ իրականացվեց ակցիա՝ նվիրված կանանց միամսյակին, որի ավարտին իգական սեռի հինգ հաճախորդներ ստացան նվերներ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի և Ria Money համակարգի կողմից: Ակցիայի արդյունքում արձանագրվեց Ria Money համակարգով գործարքների աճ 75%-ով, նախորդ տարվա համեմատ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը նաև շարունակեց փնտրել նոր գործընկերներ արագ դրամական փոխանցումների ոլորտում՝ ստանալով ՀՀ Կենտրոնական բանկի թույլտվությունը մասնակցելու «ԵՅՇԷ» ռուսաստանյան համակարգին և ստեղծելով նոր համագործակցության հիմքեր:

Համագործակցության խորացման արդյունքում բանկը հաշվետու տարում կարողացավ հաճախորդներին առաջարկել մատչելի սպասարկման սակագներ՝ շուկայում ապահովելով մրցակցային կայուն դիրքեր: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի մասնաբաժինը հայաստանյան արագ դրամական փոխանցումների շուկայում կազմում է 11%:

Բանկի կողմից առաջարկվող արագ դրամական փոխանցումների տարբեր համակարգերի լայն ընտրության շնորհիվ մեր հաճախորդները ներկայում հնարավորություն ունեն փոխանցումներ կատարելու և ստանալու փոխանցումներ

աշխարհի ցանկացած երկրից, որտեղ գործում են արագ դրամական փոխանցումների համակարգեր:

Արագ դրամական փոխանցումներից օգտվող հաճախորդների շրջանում աճեց նաև բանկի ARARATTRANSFER ակումբի անդամների թիվը: ARARATTRANSFER բոնուսային ծրագրի շրջանակներում միջազգային արագ դրամական փոխանցումներից օգտվող առավել ակտիվ հաճախորդներին առաջարկվում են մի շարք արտոնություններ, այդ թվում՝ զեղչեր փոխանցումներ իրականացնելիս, անհատական պահատեղերից օգտվելիս, արտոնյալ փոխարժեք և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի քարտապաններին առաջարկվող զեղչային համակարգից օգտվելու հնարավորություն:

Բանկում կիրառվող մրցունակ սակագների և սպասարկման բարձր որակի շնորհիվ հաշվետու տարում գրանցվել է SWIFT համակարգով փոխանցումների աճ 11%-ով՝ նախորդ տարվա համեմատ, ներգրավվել են նոր հաճախորդներ:

Պլաստիկ քարտեր

Ընթացիկ տարում բանկն ակտիվորեն շարունակեց միջոցառումները բանկային համակարգում պլաստիկ քարտերի թողարկման ծավալների ավելացման, ձեռք բերված դիրքերի պահպանման և ամրապնդման, քարտերի ընձեռած հնարավորությունների և առավելությունների վերաբերյալ հանրությանը տեղեկացման լայնածավալ աշխատանքները: Արդյունքում բանկն արձանագրեց վճարային քարտերի ցուցանիշների կայուն աճ, ինչը պայմանավորվեց բանկի կողմից իրականացված մի շարք միջոցառումներով, մասնավորապես՝


➤ 2015 թ.-ին շարունակվեց հաճախորդների սպասարկման որակը բարձրացնելու ուղղությամբ տարվող հետևողական աշխատանքը, որի արդյունքում ներդրվեց ՊԻՆ ծրարները Բանկի տարածքում տպագրելու նախագիծը:

➤ 2015 թվականին ընդլայնվեց բանկի կողմից թողարկվող Diners Club քարտերի սպասարկման ցանցը՝ հասնելով 920-ի:

➤ Զեղծարարությունների զսպման նպատակով իրականացվեցին մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ “AntiScammer” ծրագրի ներդնում բանկումատներում, չիպային քարտերի քանակի աճ և այլն:


➤ Զարգացվեց և ընդլայնվեց քարտերի սպասարկման ենթակառուցվածքը: Հաշվետու տարվա վերջի դրությամբ ավտոմատ գանձման մեքենաների քանակը կազմեց 92 հատ, POS տերմինալների քանակը՝ 565 հատ:

➤ 2015թ.-ի վերջի դրությամբ բանկի թողարկած վճարային քարտերի կառուցվածքը՝ ըստ վճարային համակարգերի, ներկայացվում է ստորև.




2014թ. տարեվերջի համեմատ MasterCard վճարային համակարգով սպասարկվող քարտերի տեսակարար կշիռն ընդհանուր քարտերի մեջ նվազել է 0.2 տոկոսային կետով, Visa Card-ի տեսակարար կշիռը՝ աճել 0.3 տոկոսային կետով:

Բանկը, թողարկած քարտերի քանակով, ՀՀ բանկային համակարգում գտնվում է առաջատար դիրքերում, ինչը պայմանավորված է բանկի կողմից այդ բնագավառի զարգացմանն ուղղված ակտիվ և նորարար ծրագրերի իրականացմամբ: 2014թ. համեմատ 2015թ.-ին թողարկված քարտերի քանակն աճել է 4,588 հատով կամ 3.6%-ով և կազմել 133,033 հատ:




Ստորև ներկայացվում են ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ վճարային քարտերով իրականացված կանխիկ և անկանխիկ գործարքների ծավալները.

Վճարային քարտերով իրականացված կանխիկ և անկանխիկ գործարքների ծավալը (մլն. ՀՀ դրամ)



Բանկի կողմից թողարկված քարտերի միջոցով իրականացված կանխիկ և անկանխիկ գործարքների տեսակարար կշիռը՝ ըստ վճարային համակարգերի ներկայացվում է ստորև.



Հաշվի առնելով ՀՀ տնտեսության ինտեգրումը, էլեկտրոնային առևտրի ծավալների շարունակական աճը, անկանխիկ գործառնությունների տարածումը՝ բանկն առանձնակի կարևոր է համարում շարունակաբար ավելացնել միջազգային պլաստիկ քարտերի (Visa, MasterCard) թողարկման ծավալները, ինչպես նաև օգտագործելով բանկի՝ Հայաստանում Diners Club միջազգային վճարային համակարգի բացառիկ ներկայացուցիչը լինելու հանգամանքը, բանկը շարունակելու

է իրականացնել բազմատեսակ ծրագրեր՝ հանրությանն առավելագույնս իրազեկում Diners Club քարտերի ընձեռած հնարավորությունների և առավելությունների մասին:

Մեր աշխատողները

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ գործունեության հաջողությունը պայմանավորված է աշխատողների բարեխիղճ ու նպատակասլաց աշխատանքով, ուստի բանկը մշտապես արժևորում է յուրաքանչյուր աշխատողի ներդրումը բանկի զարգացման գործում:

Կարևորելով աշխատողների մասնագիտական և անձնական զարգացումը՝ բանկն աշխատողների համար ստեղծում է հավասար հնարավորություններ յուրաքանչյուր աշխատողի ներդրման արդարացի գնահատման, նախաձեռնության խթանման, թիմի ձևավորման համար: Բանկի ղեկավարությունն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում անձնակազմի մասնագիտական գիտելիքների կատարելագործման, առաջխաղացման և մոտիվացման գործընթացին:

Ելնելով վերոգրյալից՝ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2015 թվականի ընթացքում, բանկի ղեկավարությունն իր ուշադրության ներքո է պահել անձնակազմի մասնագիտական գիտելիքների կատարելագործմանը, մոտիվացմանը (խրախուսման, առաջխաղացման և այլն) վերաբերող ցանկացած հարց:

ՀՀ բանկային համակարգում մրցունակ անձնակազմ ձևավորելու նպատակով բանկը պարբերաբար վերանայում է անձնակազմի բնագավառը կարգավորող ներքին իրավական ակտերը, որոնցով ներդրվում են միջազգային լավագույն փորձի հիման վրա մշակված անձնակազմի հավաքագրման, մրցույթների կազմակերպման, վերապատրաստման և ատեստավորման համակարգեր: Նշված համակարգերը նպաստում են աշխատողների վերաբերյալ ընդունվող ցանկացած որոշման արդարության և թափանցիկության մակարդակի բարձրացմանը:

Բանկի ղեկավարությունը, գնահատելով աշխատողների մոտիվացման կարևորությունը, 2015թ. ընթացքում շարունակեց իր լավագույն աշխատողների հրապարակային խրախուսման և մոտիվացման միջոցառումները:

Բանկում առանձնակի ուշադրություն է դարձվում նաև նոր ընդունվող աշխատողների մասնագիտական բարձր պատրաստվածությանը և նրանց համապատասխանությանը բանկի ներքին բիզնես մշակույթին:

Բանկում, հաշվի առնելով անձնակազմի մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման անհրաժեշտությունը, հաշվետու տարվա ընթացքում կազմակերպվել են բանկի կողմից մատուցվող ծառայությունների, սպասարկման որակի կատարելագործման, փողերի լվացման և ահաբեկչության կանխարգելման, կազմակերպությունների վարկունակության գնահատման, ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության, ներդրվող նոր ծառայությունների վերաբերյալ սեմինար պարապմունքներ:

Այս ամենի արդյունքում բանկի ամբողջ անձնակազմը պատրաստակամություն է ցուցաբերում բանկի ղեկավարության կողմից առաջ քաշված խնդիրների կարգավորման, սահմանված նպատակների իրականացման, ինչպես նաև բանկի կարճաժամկետ և երկարաժամկետ թիրախների ապահովման գործում:

Բանկի աշխատողի կերպարի հիմնական բնութագրիչ է դիտվում մասնագիտական գիտելիքների, ունակությունների, համապատասխան որակների և գործարար վարվելակերպի համարժեք զուգակցումը:

Բանկը, պահպանելով կառավարման դասական գործընթացները, միաժամանակ ներմուծում է կառավարման այնպիսի մոդելներ, որոնք նպատակաուղղված են կոլեկտիվի համախմբմանը՝ նրա նպատակների ու խնդիրների իրականացման գործում:

Անձնակազմի կառավարման գործառույթներում մեծացել է Balanced Scorecard /BSC/ կամ ցուցանիշների հաշվեկշռված համակարգի /ՅՀՀ/ ներդրման դերը, այն իրենից ներկայացնում է բանկի աշխատողների թիրախային ցուցանիշների սահմանում և կանոնակարգում ինչպես առանձին աշխատողների, այնպես էլ ստորաբաժանումների մակարդակով:

Չնայած այն հանգամանքին, որ անձնակազմի համալրման և վարչական հարցերը շատ ժամանակատար են, սակայն բանկի անձնակազմի կառավարման քաղաքականությունում առանձնակի կարևորություն և ուշադրություն է դարձվում տաղանդների կառավարմանը, թիմի մոտիվացմանը, բանկին բնորոշ արժեքների համակարգի և կորպորատիվ մշակույթի ձևավորմանը:

31.12.2015 թվականի դրությամբ բանկի աշխատողների թիվը կազմել է 696, որոնց 82.8%-ն ունի բարձրագույն կրթություն: Բանկի աշխատողների ավելի քան 73% ունի երեք և ավելի տարվա աշխատանքային փորձ ֆինանսաբանկային համակարգում:

Բանկում աշխատողների 38%-ը տղամարդիկ են, իսկ 62%-ը՝ կանայք:

Բանկը, հաշվի առնելով անձնակազմի մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման անհրաժեշտությունը, հաշվետու տարվա ընթացքում կազմակերպել է բանկի կողմից մատուցվող ծառայությունների, սպասարկման որակի կատարելագործման, փողերի լվացման և ահաբեկչության կանխարգելման, ներդրվող նոր ծառայությունների վերաբերյալ 50 սեմինար-պարապմունքներ, որոնց մասնակցել են 951 աշխատող:

Տարածքային գործունեություն

Բանկը, մշտապես առաջնորդվելով իր հաճախորդի կողքին լինելու, խորհրդատվություն տրամադրելու, արդյունավետ և օպտիմալ լուծումներ առաջարկելու, գործունեության աշխարհագրության շարունակական ընդլայնման և զարգացման քաղաքականությամբ, 2015 թվականին բացեց ևս 2 մասնաճյուղ, ուստի հաշվետու տարվա վերջում բանկն արդեն ուներ 51 մասնաճյուղ, որից 26-ը գտնվում են Երևանում, 24-ը՝ Հայաստանի մյուս մարզերում, և մեկ մասնաճյուղ՝ ԼՂՀ մայրաքաղաքում:

2015 թվականի ընթացքում Բանկի գործող մասնաճյուղերում, կադրերի որակավորման բարձրացման և նյութատեխնիկական բազայի ընդլայնման նպատակով, միջոցներ են հատկացվել մի շարք մասնաճյուղերի կապիտալ վերանորոգման և տեխնիկական վերազինման համար, որի արդյունքում բարելավվել են Բանկի աշխատակազմի աշխատանքային, ինչպես նաև հաճախորդների սպասարկման պայմանները, նվազել է մեկ գործառույթի և մեկ հաճախորդի սպասարկման ժամանակի տևողությունը: Մասնաճյուղերում կադրերի որակավորման նպատակով՝ յուրաքանչյուր ամիս Բանկի տարբեր կառուցվածքային

ստորաբաժանումներ իրականացրել են համապատասխան սեմինար պարապմունքներ:

Բանկի մասնաճյուղային ցանցի ընդլայնման ծրագիրը կրելու է շարունակական բնույթ՝ նպատակ ունենալով ընդլայնել Բանկի գործունեության աշխարհագրությունը և մոտեցնել Բանկի սպասարկումն ու ծառայությունները հաճախորդների առավել լայն զանգվածի:

Ամփոփ ֆինանսական տվյալներ

Ցուցանիշի անվանումը	2014 թվական	2015 թվական
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	2,843,432	941,681
Սեփական կապիտալի միջին մեծություն	20,947,193	21,974,242
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	13.57	4.29
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	2,843,432	941,681
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	126,688,959	131,451,219
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	2.24	0.72
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	2,843,432	941,681
Գործառնական եկամուտ	8,309,965	6,331,516
Զուտ շահույթի մարժա (NPM), %	34.22	14.87
Գործառնական եկամուտ	8,309,965	6,331,516
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	126,688,959	131,451,219
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	6.56	4.82
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	126,688,959	131,451,219
Սեփական կապիտալի միջին մեծություն	20,947,193	21,974,242
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	6.05	5.98
Զուտ տոկոսային եկամուտ	6,214,644	4,563,760
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	85,524,164	77,520,328
Զուտ տոկոսային մարժա (NIM)	7.27	5.89
Տոկոսային եկամուտ	11,043,246	10,239,473
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	85,524,164	77,520,328
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	12.91	13.21
Տոկոսային ծախսեր	4,828,602	5,675,713
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	73,685,001	64,874,295
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	6.55	8.75
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	2,843,432	941,681
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	1,277.501	1,278
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	2,225.78	737.13
Սպրեդ, %	6.36	4.46

Բանկի հետագա զարգացման նկարագիրը

Բանկի հեռանկարային զարգացման խնդիրները նպատակաուղղված են լինելու ձեռք բերված դրական միտումների շարունակականության ապահովմանը: Բանկն առաջնահերթ կարևորում է հաճախորդների հետ փոխշահավետ համագործակցության պահպանումն ու ընդլայնումը: Այդ նպատակով՝ Բանկն առավել մատչելի կդարձնի մատուցվող սպասարկումներն ու ծառայությունները՝

հաճախորդներին առաջարկելով ֆինանսական ծառայությունների բավարարման ամբողջական փաթեթային լուծումներ:

Բանկի զարգացման կարևոր բաղադրիչներից է միջազգային գործընկեր ֆինանսական կառույցների հետ համագործակցության ընդլայնումը՝ նպատակ ունենալով ապահովելու բանկային ծառայությունների և սպասարկումների որակի համապատասխանեցումը միջազգային չափորոշիչներին և բանկային ինովացիոն պրոդուկտների ներդրումն ու Բանկի մրցունակության մակարդակի բարձրացումը:

Ապագա ժամանակահատվածում առաջադրված խնդիրները պայմանավորված են Բանկի առջև դրված նպատակներով և դիտարկվում են գործունեության որակական բնութագրիչներով ու ֆինանսատնտեսական ցուցանիշների աճի մակարդակով: Հիմնական խնդիրների շարքում կարևորվում են.

- ✎ Կառուցվածքային փոփոխությունների իրականացումը (պրոդուկտների ուղղվածությունից հաճախորդների ուղղվածությանը քաղաքականության անցման նպատակով):
- ✎ Մասնաճյուղերի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումը:
- ✎ Մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը:
- ✎ Ծառայությունների վաճառքի էլեկտրոնային խողովակի կիրառումը (Facebook, Twitter և այլ):
- ✎ Անձնակազմի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումը:
- ✎ Նորագույն տեխնոլոգիաների վրա հիմնված ծառայությունների զարգացումը (Mobile and Internet Banking):
- ✎ Ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումը:
- ✎ Ոչ տոկոսային եկամուտների աճը (արագ դրամական փոխանցումների, կումուսալ վճարումների, արտարժույթի փոխարկման, պլաստիկ քարտերի սպասարկման, անհատական պահատեղերի տրամադրման, ինչպես նաև ոչ տոկոսային եկամուտներ գեներացնող մի շարք այլ ծառայությունների շարունակական աճ ապահովելու շնորհիվ):
- ✎ Վարկային պորտֆելի ընդլայնումը (ՓՄՁ վարկերի, մինչև 500 հազ. ԱՄՆ դոլարի չափով տրամադրվող բիզնես վարկերի, ոսկու գրավադրմամբ տրամադրվող վարկերի, հիփոթեքային վարկերի և առևտրի ֆինանսավորման վարկերի ծավալների ավելացման միջոցով):
- ✎ Միջազգային ֆինանսավարկային կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնումը և նոր ծրագրերի իրագործումը:
- ✎ Բանկի, ֆինանսական կազմակերպության կամ վարկային պորտֆելի ձեռքբերումը:
- ✎ Ծրագրով սահմանված զարգացման համար բավարար կապիտալի ապահովումը:
- ✎ Բանկի տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման համակարգերի կատարելագործումը, ներքին տեղեկատվական հոսքերի արդյունավետության բարձրացումը:
- ✎ Բանկի շահառուների, բաժնետերերի, հաճախորդների, աշխատակիցների միջև թափանցիկ հաղորդակցության խրախուսումն ու ապահովումը:

Ֆինանսատնտեսական ցուցանիշների մասով՝ Բանկը կանխատեսում է ապահովել.

- ↗ Բանկի ընդհանուր ակտիվների աճ,
- ↗ ընդհանուր կապիտալի աճ,
- ↗ միջազգային ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների շարունակական աճ,
- ↗ վարկային պորտֆելի դվերսիֆիկացիա և ապակենտրոնացում,
- ↗ ոչ տոկոսային եկամուտների աճ,
- ↗ ոչ տոկոսային եկամուտներ գեներացնող ծառայությունների աճ,

Արդյունքում, վերը բերված ցուցանիշների աճի պայմաններում կարձանագրվի նաև զուտ շահույթի աճ: